

ՆՈՐԻՆՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Менк“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնները ընդունվում են ա մեն լ ե գ ու ո ղ

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի Գումար—Ներքին տեսչութիւնը
Հայոց թատրոնը: Նամակ Գարվաշտարայից:—
Սերտաքիւն տեսչութիւնը, Հարստահա-
րութիւններ Սեբաստիայում: Արարատեան ըն-
կերութեան վարժապետանոցը:— Սաւա լու-
րեր:— «Մշակի» հեռագիրներ:— Յայտարարու-
թիւններ:— Տեղեկացոյց:— Բանասիրական
Մի ճանապարհորդութիւն:

ԹԻՖԼԻՍԻ ԴՈՒՄԱ

Նորերումն նուիրելով մի յո-
գուած թիֆլիսի Դումայի ձայ-
նաւորների գալու ընտրութիւննե-
րին, մենք այն միտքը յայտնեցինք,
որ ընտրողները սօրան կամ նո-
րան քուէ տալով, պէտք է աչքի
առաջն ունենան ո՛վ է ընտրվողը,
հասարակութեան ինչ գասակար-
գին է պատկանում, արդեօք իր
հասարակական դրութեամբ, իր
գործունէութեամբ, իր համոզ-
մունքներով ընդունակ է նա հա-
սարակաց օգտին ծառայելու, ար-
դեօք ամբողջ կարիքները, քա-
ղաքի շահերը մօտ են նրա սրը-
տին... Մեր կարծիքով փոքր ցէնդ
ունեցողները աւելի մօտ են ժողո-

վորին, ուրեմն և աւելի լաւ կա-
րող են հասկանալ ընդհանուրի
օգուտները, և աւելի լաւ կարող
են պաշտպանել այդ օգուտները:

Մինչև այժմ մեր քաղաքային
ընտրութիւնները այսպէս էին կա-
տարվում՝ արկղի վրա գրվում էր
ընտրվողի անունը և ընտրողները
քուէ էին դրում, առանց քննե-
լու ընտրվողի արժանաւորութիւ-
նը, նրա քաղաքին պիտանի լի-
նելու չափը: Այն մարդիկ աւելի
չափ քուէ էին ստանում, որոնք
կամ հարուստ էին, կամ յայտնի
էին իրանց հասարակական դրու-
թեամբ, իրանց աստիճաններով,
կամ առևտրական գործերով...

Բայց արդեօք սրա՞նք կարող
են համարվել ժողովրդի ցաւերին
և պահանջներին կարեկցողներ,—
այդ մասին ոչ ոք չէր մտածում:

Պարզ բան է որ առաջարկե-
լով այս ինչ, կամ այն ինչ մար-
դիկներին ընտրել և քուէ չը տալ
նրանց, որոնց ամբողջ կարիքները
օտար և խորթ են, մենք պէտք է
ընդունէինք որ ընտրողական ժո-
ղովը այդ բանը ուրիշ կերպ չէր

կարող անել, եթէ ոչ քուէար-
կութեանց առաջ հրապարակա-
պէս քննել այս կամ այն կանդի-
դատուրայի արժանաւորութիւնը:
Տեղական ռուս «Օճօր» լրագիրը
այդպէս էլ հասկացաւ մեզ և լը-
րացրեց մեր միտքը:

Դորանով չը բաւականանալով
ռուս լրագիրը նուիրեց և մի եր-
կրորդ յօդուած մեր Դումայի
գործերին, որտեղ առաջարկում է
որ իւրաքանչիւր ձայնաւոր խօսի
Դումայի ժողովում այն լեզուով,
որ նա աւելի լաւ է տիրապե-
տում:

Այդ միտքը մենք յայտնել ենք
դեռ չորս տարի սրանից առաջ,
երբ դեռ ամբողջապէս մոցրած
չէր մեր քաղաքում նոր քաղա-
քային ինքնավարութիւնը:

Եւ ճշմարիտ՝ միթէ այն ձայ-
նաւորը որ ռուսաց լեզուին վարժ
չէ պէտք է լուռ մնայ, չը պէտք
է յայտնի իր մտքերը, ինչքան
էլ ծանօթ լինի նա ժողովրդի
կարիքներին և քաղաքի տնտեսա-
կան պէտքերին հետ...:

Այն մարդը, որ կարող էր յայ-

տնել քաղաքի բարեօրման համար
օգտաւէտ մտքեր խօսելով հայե-
րէն, վրացերէն կամ թուրքերէն,
այժմ պէտք է լուռ մնայ, պէտք
է ի վնաս քաղաքի շահերի հրա-
ժարվի իր մասնակցութեանից, զո՛հ
իր ծառայութիւնը ընդունված
ձևին:

Այսպիսով փոքր ցէնդ ունե-
ցողների բազմութիւնը չէ ընտր-
վում, վարժ չը լինելով ռուսաց
լեզուին, իսկ եթէ նրանցից մի
քանիս ձայնաւոր ընտրվում են,
այդ ձայնաւորները Դումայի մէջ
ան ձայն են մնում, բաւական չը
տիրապետելով պետական լեզուն
և մի և նոյն ժամանակ չը վըս-
տահանալով իրանց մայրենի լե-
զուով յայտնել իրանց մտքերը:
Ուրեմն քաղաքի շահերը վնաս-
վում են և մենք ընդունված ձևին
զոհում ենք փոքր ցէնդ ունեցող-
ների ծառայութիւնը քաղաքի
գործերին, հեռացնում ենք մեր
քաղաքի բնակիչների այդ բազ-
մութիւն մասը մեր քաղաքի գոր-
ծերին մասնակցելուց:

Դ. Ա.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ԶԱՆԱՊԱՐԶՈՐՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն և վերջ)

Այս օրերս ես կը թողնեմ մայրաքաղաքը և
կուգամ տեղս: Եկած օրէս մինչև ցայժմ այն-
պիսի անտանելի օդեր է անում, որ հարկ չը կայ
անպատժ ոտքը տան չէմքէն դուրս գնելու:
Պետերբուրգը առանց նորա էլ չափ չէր կարող
պարծնալ իր եղանակի գեղեցկութեամբ, բայց
այս անգամն նա «ինքն իրան գերազանցեց»,
ինչպէս սովորաբար կամի արևմտեան լեզու-
ներով,—մէջ, անձրև, ցուրտ, անտանելի հիւ-
սիս-արեւելեան քամի, գետնի խոնաւութիւն—
անն ինչով բարեկեց, և թերեւ ճամբայ ձգելու է
ինձ հիւսիսային Պալմիրան: Գնաւ այսուհետեւ,
փողոցէ փողոց ընկիր, զննութիւններ, նկատ-
մունքներ արան և քարեկամացող համար պատ-
րաստէ ճանապարհորդական նկատողութիւններ:
Այս րօպէին, որ թերեւ դուք ըրտած նստած
էք և ձեր պասքը ստուգալաւն ջրով էք զո-
վացնում, ես նստած եմ ցուրտ սենեակի մէջ,
ատամներով ատամներ թմբակահարելէն գրում
եմ ձեզ այս տողերը, վրաս հագած տաք պալտոս
և ձեռքս ցրտէն կապուկած: Նրանք ձեզ հա-
զար անգամ ասել եմ, այժմ էլ նոյնը կրկնում
եմ՝ ձեր տաք օդը կաժէ այստեղի կենաց ամեն
յարմարութիւններուն և փարթամութիւններուն,
զիտցէք գնահատել այն, ինչ որ թթիւդ տակ
է, մի ձգտիք դէպի հիւսիս, կենաքերդ (Աստու-
ծու ամենաթանկազին պարգևը) կը կարճանայ:
Հիւսիսը հարաւարեակ ժողովրդի համար միշտ
եղել է պատժատեղի. մեր պապերը մեզմէն յի-
մար չէին: Իմացէք թէ ցոր աստիճան խելքի

պակասութիւն է գաղթի Նախիջևանէն ոչ դէպի
հարաւ, այլ դէպի հիւսիս: Բայց որքի կասեա:
Ես կենում եմ Каменно-островский проспект
ասուած ամբարանքը, Բնակարանի առջեւն անց-
նում է ճանապարհը, որ տանում է գրեթէ դէպի
մեծագոյն մասը Պետերբուրգի ամբարանքներուն:
Կը հաւատայ, եթէ ասեմ թէ՝ երբ րօպէի մէջ
աւելի մարդիկ, ձիեր, կառքեր, ապրանքներ անց-
նում են առջեւէս, քան թէ ամբողջ օրը Նախիջևա-
նէն դէպի Բոստով: Գիտեմ, դուք ասածիս կերկ-
մտիք, և իրաւունք ունիք, ես ինքս էլ գիտեմ,
որ աչքով չը տեսած՝ հաւատալն դժուար է: Ինչ
և իցէ, բանը այն չէ. բանը այն է, որ օրվայ մէջ
մայրաքաղաքիս քառորդ բնակիչք, իր ամենա-
ճոխ և ամենաչափ պարագայներով անցնում
են առջեւէս, այր, կին, պատանի, օրիորդ, ծեր-
մատաղանաւ, հարուստ, աղքատ—ամենքը անց-
նում են առջեւէս, ամենի վրա ոտքից գլուխ
խուզարկու հայեացքով նայում եմ, ամենին մազէ
անցուցածի պէս զննում եմ. բայց, հաւատա-
ցէք, մեր տեղի գեղեցկութիւնը գերազանցում է
այստեղիսինը՝ յարաբերութեամբ: Ճշմարիտ է,
անթիւ է այստեղի երկուծ կառէտների և կա-
լեսակաների թիւը, անհամար է միաձի ֆաէ-
տօնները, լինչկաները և չառաքանները, բայց...
կարէտի և կալեսականի մէջ նստած են արխ-
տօկրատներ և բարձրաստիճան պաշտօնատար-
ներ, ֆաէտօններում նստած են հարուստ վա-
ճառականներ և միլիօնիւ կանտորչիկներ, իսկ
միջին դասը օգուտ քաղում է հասարակաց կառ-
քերով (վարձած) և 3—5 կոպէկանոց ձիա-եր-
կանաց կերպասեայ հալաւ, նորածն հագուստ—
այստեղ գործածական է միայն միջնաստիճանի,
հոգակաւոր գեներալներուն և երեկի միլիօնե-
րներուն և... հօր ժառանգութիւնը վատնող յի-
մար ժառանգներուն և նոցա սիրուհիներուն: Ամեն
րօպէ ես կարմրում էի, միտս բերելով մերոնց

պճնասիրութիւնը: Նախիջևան, Նախիջևան, բանի
որ ժամանակ կայ բաց աչքը. լսէ քու խոսկան,
անխարդախ բարեկամներու ձայնը. այն փողը,
որ դու այժմ թեթեամբութեամբ, ապարդիւն
չպոտում ես ալ ու ձախ, մի օր կարող էր քեզ
չափ ու շատ պէտք գալ, կը փայլանես արած յի-
մարութիւնդ, բայց ոչ կը լինի: «Կարմիր ոս-
կին սև օրվան», չը մոռանաս այս, քու խե-
ղճ պապերու ասած իմաստուն առածը: Կարճ
ասեմ. Ռուսաստանի քաղաքների մէջ Պետեր-
բուրգը ամենից համեստն է յարաբերութեամբ:
Պրօֆէսոր Քոթովիչին և նրա եղբորորդի
Սմառազը Բոսովիչին հետ երկար—բարակ խօսե-
ցալ մեր տեղի հանգամանքների մասին. այս
երկրորդը, լինելով նշանաւոր անձն և պաշտօնա-
տար, ինձ զմայազան, մեր քաղաքին օգտաւէտ
խորհուրդներ տուեց, որոնցից ի հարկէ մենք մե-
զի պէտք աւան օգուտը կը քաղենք, ի
միջի այլոց խօսեցանք նաև մեր լրագրի ոճի
մասին: Ես ասացի, որ գրելու ենք այնպէս, որ
վերջին արապային և նախնին հասկանան,
նոքա զարմացան մեր ընտրութեան և ճաշակին
և միաբերան ասացին, որ մենք մեր պաշտօնը
առաւել լաւ հասկացել ենք, քան թէ Ռուսաս-
տանի ամեն գիտունները և գրագէտները. լրա-
գրապետի և հեղինակի պաշտօնն է գաղափար
տարածել և ոչ բռնի լեզու սովորեցնել: Ուրեմն,
սիրելիներ, Նախիջևանի պէս յետ ընկած քաղա-
քէն ես կարող է լուսոյ կայծեր ցայտել և ճշ-
մարտութեան աղբիւր ըլլալ: Մի վրա՞տիք սի-
րելիներ. Աստուծով մենք ես օգտաւէտ անդամ-
ներ կը հանդիսանալ մարդկութեան մէջ և լը-
րօպայի ուշադրութիւն կը դարձնենք մեր վրա,
Սիրելիներ, Աստուծոյ անձառելի կամօք, մեր
ձեռքն ընկան գաստիարակութիւն մասկանց
ապագութիւն, լրագրութիւն, թերեւ և թատ-
րօն. ինչքը չենք կարող յառաջացնել այդ 4
հօր լծակներով (ԲԻՅՅԱԵ), եթէ միայն անձու-

րացութեամբ սկսենք և շարունակենք մեր բարո-
յական գործունէութիւնը: Բարեկամներ, թշնա-
մին այստեղ ես աշխատել է սկսել մեր անունը
և մեր գործունէութեան ծուռ մեկնութիւն է
տուել, բայց զարմանք բան, լսողը հաւատացած
չէ. և երբոր ես ամեն բան, ինչպէս որ էր, ա-
ռանց թաքցնելու պատմեցի, ինձ բնածին և յա-
տուկ բացատրութեամբ, ամենքը միաբերան ա-
սացին. «մենք ինքներս գիտէինք, որ անցքը մեզ
եղծած պատմել են»: Սիրականեր, կը հաւատայ
թէ ոչ. մենք այստեղ ես ունենք եղել է անե-
րկոյթ բարեկամներ և ցաւակիցներ, որոնց յայ-
տնի եղել է մեր ամեն խօսքը, վէճը, դատ-
մունքը և գործը. մեր քուրբի վէճերը, խօսակ-
ցութիւնը, մարդոց անունները անգամ յայտնի
են այնտեղի օտարաբաղադրացիներուն: Ուրեմն
Պապուկիսսը միշտ կը մնայ եղել Պապուկիսս:
Ամենքը անհամբերութեամբ սպասում են «Նա-
խիջևանի» հրատարակութեանը. թէ և մենք,
միտքիդ է, ամենին պրօբեմն չունէինք, որ նա
մեր քաղաքի սահմանէն դուրս երթալու փա-
ռասիրութիւն կունենայ:
Սիրելի բարեկամներ, ուղում էք ես ձեզ մի
ուրիշ բանով ես ուրախացնեմ. բայց չէ, այդ
անյարմար է նամակաւ հաղորդելը, նամակաւ
որ այսօր վաղը պիտի տպվի, երբ որ կուգամ
բերանացի կը պատմեմ. այսքան միայն իմա-
ցէք, որ ես հետս կը բերեմ մի ոյժ, որով շատ
երեկի և աներկոյթ երկիւղներէ գոցէ և վը-
տանգներէ կազատվինք: Աստուծանայ արքան
ստակալի չէ, ինչպէս որ նկարում են նորան, ա-
սում է առածը: Լաւ է որ եկայ մայրաքաղաք
(օրնովի նորա սկզբնապատճառը) ապա թէ ոչ
երկար ժամանակ մենք կոյր պիտի մնայինք ա-
մենքս...
Այս նամակ վերջինն էլ չը լինի, գոնէ վեր-
ջիններէն է. հէնց որ պ. խէն պատասխան և
յօժարութիւն կը ստանամ հատուցման մասին,

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Հինգշաբթի օրվան 28-ին, հայ թատրոնային խումբը տիրին Մեղր-Նուրբաթեանի մասնակցութեամբ բարեգործական նպատակով տուեց մի ներկայացում ներսի-սեան դպրոցի հին դահլիճում։ Խաղում էին Վուր արաբլիս, պիտի պատկվա՝ գործ Մուրիկ, փոխ Փուրինեանցի, Վեպո II գործողութիւն, հեղ. Գ. Սուսուկեանի և Պի-պոն տիմուր հեղ. հանգ. Տէր-Գրիգորեանի։ Անխաղաղ խաղացողները մէկի ազգանունը ապկած էր մեծ տառերով և զանազանում էր միւս անունները, թէպէտ մենք սիրող-ները խաղը մէջ ոչինչ զանազանութիւն չէ տեսներ։

Քննել երկուստեքները խաղը մենք մտա-գիր չենք, թէ խաղը և թէ ամբողջ ներ-կայացումը իր բոլոր պարագաներով ստոր էր ամեն անակ քննադատութեանց։ Այդ ներ-կայացումը միայն աւելցնելով մի տուր թերթի հայոց թատրոնի պատմութեան վրա, որ այդպէս ողբերգական ձևով և թեթեւ ոճով նկարագրում է պ. Գ. Չմէլեանը իր յիշա-տակարանի մէջ։

Հինգշաբթիկայ ներկայացումը մեզ կրկին անգամ ապացուցեց, որ հասարակութիւնը պահանջ ունի հայոց թատրոն ունենալու։ չը նայելով որ անխաղաղ և խաղացողները ա-նունները գրաւական էին ներկայացման ան-համ լինելու, այնու ամենայնիւ հասարակու-թիւնը լցվել էր ներսիսեան դպրոցի դահ-լիճը։

Վուր արաբլիս, պիտի պատկվա՝ վարդիլը Մուրիկի աղաւաղված և կիսաօրացած Վեպ-մայ Ամուսնութիւն է, որ արդէն թարգմա-նած է պ. Գ. Չմէլեանից։ Մուրիկի սուր զը-րուածքը շատ քիչ տեղ էր ծիծաղելուում հասարակութեանը։ Միայն փողոցական խա-ղերը ինչպէս բոլոր գլխի ծոթովը գրեկնայ, բոլոր հօրն ողորմիւ և այն ծիծաղ էին յա-լուցանում, մնացած մասերը անգրէն և ան-համ էին, մինչդեռ Վեպմայ ամուսնութեան

խաղին ճանապարհ կընկնեն Ուրեմն ցետեու-թիւն։

Գրում եմ ձեզ (այդպէս համոզված եմ առ-ժամանակ) վերջին նամակս. այլ ես երկար բա-րակ մնալու առիթ չունեմ։ Երբեք ոպասում եմ ճանապարհի փոքր, որն ստացած չը ստացած պիտի թողնեմ մայրաքաղաքս և դամ գէպի ձեզ։

Այս օրերս բերլինն սպասում են այստեղ խորհն եպիսկոպոսին. չը գիտեմ կը տեսնեմ նրան թէ ոչ նրա բոլոր գործունէութիւնը մօտ ք մօտայ արդէն յայտնի է ձեզ պարբերաբու-թիւններէն, մասնաւոր նամակներէն և բերա-նացի պատմածներէն, ասեմ թէ վրէն տեղի-նելու ոչինչ չը կայ, այնպէս չէ... Բայց կը սխալվեք։ Ինչպէս ես իմացայ, խորհն եպիսկո-պոսը միակ անձն եղել է, որ այստեղ խօսել և ներգործել է հայոց խնդրի մասին, մնացած ա-մենք, որոնց մասին մենք կարծում էինք թէ՛ գոնէ կողմնակի կերպով նրան կօդնէին, կը քաջալերէին, ճանապարհ կը ցուցնէին, առողջա-միտ կարծիք բարի խորհուրդ կուտային, և այլն և այլն, բոլորը միմի է եղել. եթէ պատ-մածները ճշմարիտ է, մենք նախընտանցիքն այն ճգնաժամին, երբ հայոց «լինելը կամ չը լինելը» էր որոշուում, կրկնում եմ, մենք կիսամեռ նա-խնականցիքս առաւել կեանք և գործունէութիւն կը ցուցնէինք. քան թէ ցոյց տուել են այստեղի լուսաւորեալ բանիւրոն հայ գաղթականը, որոնց մասին մենք հեռուէն փառաւոր և փայլուն կար-ծիքներ ունէինք։ Միտե՛ք է, որ մենք կարծում էինք, թէ մօսկովի և պետերբուրգի միլիոնէր մեծատոնքը իրենց քաղաքներ և մտղաները բացել են մեր սիրելի նոսրակի առջև—ոչինչ այդպիսի բան ոչ միայն եղած, մտածած անգամ չէ. միայն պ. X-ը մօտ 500 մանէթ մսխել է երեք ամսվայ միջոցում, և այդ գումարով հայոց ազգի երեսփոխան, Հայաստանի ազա-

խական թարգմանութիւնը ներկայացման սկզբից մինչև վերջ ուրախ է պահում հասա-րակութիւնը։ Մենք կարծում էինք, որ Մու-րիկի այդ պիտեայի փոխարկութիւնը բոլո-րովն դուրս է գցած հայոց թատրոնի ըն-պերտութիւնը, բայց տարբարաբար դան-վեցան այնպիսի մարդիկ, որոնք ներկայաց-վին այդ յիմարութիւնը։ Մուրիկը կամ պէտք է խաղալ դրական լեզուով թարգմանած, կամ նրան բոլորովն չը պէտք է ցոյց տալ հասարակութեանը։

Վեպոն ներկայացման ժամանակ փոխա-նակ խաղին հետեւելու մեր աչքերը դահ-լիճի կողմն էին դարձրած և փնտռում էին այդ պիտեայի տաղանդաւոր հեղինակին Փառք Աստուծու, որ նա այնտեղ չէր և չը տեսա-ինչպէս անորոշաբար զգգեցին նրա գը-րուածքի երկրորդ գործողութիւնը։

Այսքան բաւական է ասել, որ բեմը Վե-պոն ներկայացման ժամանակ աջ և ձախ կողմից սենեակ էր ներկայացնում, իսկ ետեւը Մասիւս սարը և նրա մօտ գտնված Ս. Էջ-միածնի վանքը։

Ցանկալի կը լինէր, որ այդպիսի ներկայա-ցումներ չը կրկնվէին։ Աւելի լաւ է, որ հա-յոց թատրոնը առժամանակ մոռացվել, ներ-կայացումներ բոլորովն չը տրվեն, մինչև մէկ օրինաւոր խումբ կազմվել, քան թէ հասա-րակութիւնը զգլի թատրոնից։

ՆԱՄԱԿ ԳԱՐՎԱՆԱԿԱՅԻՑ

20-ին սեպտեմբերի 78 թ.

Մեր լուսանոցի խալիֆան՝ Վարդիս Սիմե-նիչը, տնէրի մէջ երեւելի մանկավարժը, իսկ աշ-խարհի մէջ անշաղկապ փիլիսոփան, մեզ բացի չար-սատանութենից (ճարտասանութիւն), տրամա-բանութիւն էլ էր տալիս։ Երբ որ համար խիստ շատ դրամ էր ստանում. (այս կէտից նայելով հանգուցեալի բարեխոնութեան վրա, խոստո-վանք լինի, նրա այդ առարկան աւելի դրամա-բանութիւն էր, քան տրամաբանութիւն...) նա բացատրում էր մեզ թէ՛ «տրամաբանութիւնը ուսուցանում է ուղիղ մտածել և ուղիղ... այ-սինքն, օրինակ չէ կարելի մի և նոյն միջոցում մի բան համ ընդունել, համ հերքել,—քանզի,

տուրիան գլխաւոր և միակ գործին, ազգու-թեան յոյսն ու ապահւնք, 5 միլիոն ժողովրդի աչքի արտասուք սրբողը մի փոքր աւելի լաւ ապրել է, քան թէ խոյն ու Սալմաստէն մեր կողմերը հանդիպող պատերազմը, վայ մեզ խե-լաղարներու։ Ի՞նչ իրաւունք ունենք մենք զանազանութիւն Բիզոնիֆիլիքէն, Սուրբիւրիէն, Վադ-դիւնիֆիլիքէն, Անդրաշիէն, որ նոքա հայերուս ինքնավարութիւն չը տուին, մինչ մենք ոչ միայն արեան զոհէն խոստովեցանք (թէ 60,000 հայեր ապարդիւն և անպտուղ անմեղ դաւանեալ նման սպանդանոց մտան) այլ և քանի մի կօպէլ հա-սարակացի դանձաբան չը ձգեցինք։ Խորհն եպիս-կոպոսի պէս մարդը որ ընտկարան ունեցել է երրորդ թէ չորրորդ դասիկոնում, ուր ծերունի Գորգակովը 120 աստիճանայնոց սանդուղքի վրայով այցելել է նորան (նվ խայտառակութիւն), խո-րէն եպիսկոպոսը՝ մի հատիկ ազգի պաշտպանը (գոնէ Ռուսաստանի հայերի մէջ) որ ճաշել է հասարակ, ափանցող կուլմէյստերակայի մօտ, հայոց ազգի նուիրակը որ 3 ամիս բաւականացել է գլխաւոր ճանապարհ... չէ, չէ, չէ. դժուար է հաւատալը, եւ առաւել հաւատացնելը, այսու ամենայնիւ, այդ այնքան ճշմարիտ է, որքան որ ինքն ճշմարտութիւնը... Քանի որ հայք փողի վրա կը նային ինչպէս հնարի անձնական հա-ճոյքը կատարելու և ոչ ազգի նպատակների հասնելու միջոցի, քանի որ հայք չեն փոխել իրենց խաղաղաստեղծութիւնը՝ կը մնան ստորիկ մարմնով և հողով։ Այս տողերը գրելիս, գրիչս չէ ուղղում հնազանդել ինձ, ձեռքս գողում է, սրբոս-լցված է կատաղի բարկութեամբ, երեսն այրված է ամօթից։—Կը փախնեմ այստեղէն, չուզեմ տեսնելու մեր խեղճ նուիրակին, ես կարծում եմ որ, հէնց երեսը նայեմ՝ իսկոյն գետինը պիտի անցնիւմ ամօթէս... Ո՛ր էին այն բազմահատոր պատմութիւնը հայոց ազգի բազմադարեան թշուառութեան եւրօպական ամեն լեզուներով

որովհետեւ այդ տրամաբանութեան կանոններին ընդդէմ կը լինի...»

Մենք հասկանում էինք լուսանոցի խալիֆայի միտքը աւելի, քան թէ ինքն էր հասկանում... —Մի բան չը հասկանայ և ուրիշին հասկաց-նել—թէ ես աս ինքն իրան հակադրամաբանական էր, բայց ինչ անեա որ այդ գեղեցիկ մեթօդան ոչ թէ դեռ չէ վերացել մեր դպրոցներից և ճե-մարաններից, այլ և անհրաժեշտ էլ է համար-վում մանաւանդ գործիւնի համար...

—Կենսքն է այդպէս թելադրում, հանգա-մանքն է այդ չիփթութեան պատճառը։ Վերջին պատերազմը, գիտենք, շատ անշաւ ազգերի անկախութեան և ազատութեան պատ-ճառ եղաւ, իսկ մի և նոյն պատերազմը խեղճ, բազմաշարք, հնգամիլիոն հայ ազգին ոչ միայն ջրերի, տաճիկների ստրուկ լինեց, այլ և նրա ունեցած թանկագին գոյութեան յոյսը, ազա-տութեան խնդիրը պ. Էնկիլդի շնորհով պղծեց, ոչնչացրեց...

Այժմ տրամաբանութեան ընդդէմ չէ, որ ա-սենք թէ պատերազմը մի և նոյն միջոցում օգ-տաւեր և վնասաւեր է։

Մի այլ օրինակ.

«Նախապաշարմունքի» պ. աշխատասիրողը իր ձանձրացուցիչ առաջաբանութեան մէջ մին մին խոստովանում է (երես I), որ նախապաշար-մունքների ուսումնասիրութիւնը իր խելքի բան չէ, և ինքն (ուրեմն մեղքնայի պէս) այդ բազ-մասնով, բազմակերպող մասներ» ունեցող նիւթը ներկայացնում է իր ընթերցողներին որպէս հում և անմշակ նիւթ (եր. II), իսկ յետոյ նոյն առա-ջաբանի XII երեսում, ուսուցիչ դառնալով, իր թղթակիցներին «պէտքէ ունի» հրամայում է՝ հե-տախուզել, լաւ ըմբռնել նախապաշարմունքի էութիւնը և յետոյ գրել...!

Ի հարկէ այստեղ հակադրամաբանութիւն կը լինէր ասել թէ պ. Բ. Նազարեան իր նախա-պաշարմունքի մէջ և տգէտ է՝ և գիտուն, և աշակերտ է՝ և ուսուցիչ...

Մի նոր օրինակ. Էջմիածինը ճեմարան ունի, իսկ ճեմարանը լուսաւորութեան տեղի է. լուսմ ենք որ այնտեղ ծնծն ու գաւազանաշարութիւնը անպակաս է, ուր վեղարաւոր և անվեղար, ամուսնացած ու չամուսնացած վարդապետներ թէ և ժողովում են, բայց կուրս էլի անխուսափելի է։—Արեմն ինչպէս չասենք թէ ճեմարանը լուսաւորութեան ու կուրս բուն է...

Գուրբ էլ գիտեք, որ Քարվանսարա Ղազարի գաւառի գիւղերից մինն է. բայց նրա մէջ կան համալսարանական գիտականներ, ինձպէս երեսի յօդուածագիր պարոններ, ուսուցիչներ,

չարագրված և միլիոնաւոր օրինակներով ցըր-ված. ուր էին կայծակնացայտ առաջնորդող յօդուածներն յընթաց 2 տարվայ եւրօպա-կան ամեն օրագիրներում գետեղած. ուր էին այն ժողովներն, այն բանքէլներն, որ պիտի անէինք. Եւրօպայի ժողովրդի սէրը և ցա-ւակցութիւնը մեր վրա դարձնելու խորհրդով, ուր էին, ուր էին այն ամենը, որ միայն կա-րելի էր էազործել փողի միջոցով... Դիցուք թէ աղբը կորցրել էր գէնքի գործադրութիւնը և արեւն վիթխիւն վախում էր... Դիցուք թէ ազգը լուսաւորութեան մէջ թող զարգացումն ունէր, բայց փող էլ չուէր. անձ կայ կաա-կածելի է։ Միթէ կարող ենք զանգառել որ հանգամանքը անբարեխաջող էր. միթէ կարող ենք ասել որ ազգի միտքը բացողները պակաս էին։ Վշաղիք չէր, որ կաշին դուրս էր գալիս— ու ինքն իրան խաչ էր հանում. ուրիշ քիչ լրա-գիրներ, քիչ հեղինակներ, քիչ բանաստեղծներ հանդէս եկան. բայց ինչպէս կերելի, ազգը չը-նած չէ եղել, այլ մեռել է... Բայց չէ, ես քը-խալ ասացի, ազգը մեռել չէ կարող, ազգի գըլ-խաւորքն, ազգի իշխանները և մանաւանդ ազգի հարուստները ու փողաւէրներն էին մեռած, փո-ղաւէրները որոցմ է մենք այդքան յոյս ու ակն-կալութիւն ունէինք։ Գալիտեանական խայտառա-կութիւն նոցա, Մեր ազգը կազաւովէր երբ մեր հարուստները ընդունակ լինէին մի չնչին դոհա-բերութեան։ Անձ ինչ թող իմանան և յորդոց որդի աւանդաբար հասցնեն մեր յետորդը։ Մեր հարուստները ձեռքէն բաց թողին այն բա-րեյալովը պիպկածը, որ հազար տարին մի ան-գամ է պատահում թողնելը այս անմիթմար, տրամալի խորհրդածութիւնը։

Յաւում եմ, որ չը կարողացայ մտնել այս-տեղի ուսանողաց ժողովընում, ասում են թէ 100-էն աւելի հայ երիտասարդը կան զանազան վերին ուսումնարաններում ցրված բժշկական

մեծ վաճառականութիւն (այսինքն վախառու-թիւն)։ Այնտեղ նստում է շատ գիւղերի դատա-ւորը, ուր դեղատուն կայ, փօստ է բացվում ամեն օր, չօստէի ճանապարհը միջով անցնում և մինչև անգամ մի լրագրի յօդուածները այնտեղ թղթակցվում. ինչպէս քաղաքներում նոյնպէս և այնտեղ հողատր հայրը ժողովրդի հետ փառաւոր վիճում, պ. Տէր-Յովհաննիսեան լիբրատեսուն էլ 2, 3 տարէնը միանգամ հաղիւ այցելում.— բացի այս. այնտեղ էլ պատ ուսողները, լրագիր չը ստացողները, սուտ ազգասէրների կենտրոնն է, ուր Տէր Ղուկաս հայրը շաբաթը մի անգամ ժամ ասում և գինեւորեում ամեն օր անխափան ճառեր կարդում պ. Տաւար Արամովի հետ.— Սխալ թէ և արամաբանութեան ընդդէմ և ընդ-դէմ իմ հանգուցեալ խալիֆայ Մարտին Սիմե-նիչի պիլինցիպներին, բայց պէտք չէ, որ ասենք թէ Քարվանսարա գիւղ է և բեզիգէն-ցի ա...

Այս բոլոր կողմնակի բաները ինչեղի, որ ինձ չը մեղադրեն տրամաբանութեան մէջ, մանա-ւանդ հետեւեալ կարևոր անցքի մասին։—Մեր գիւղում ազգասէրներից մինը ուղեց դպրոցների համար փող ժողովել և, որովհետեւ գիւղացիները խիստ են հարստացել, բարեկարգեց 100, 100 բուրլի միանուագ շնորհով...

Եւ նա զանազան հարկներով մինին իր մօտ էր հրաւիրում, միւսին ստորագրելու անվաւեր թուղթ ուղարկում և այլն.— ի հարկէ շատ էլ լաւ էր անում, եթէ միայն կարծում էր թէ ա-մենքի յարգանքն է վայելում...

Բայց ինչ անեա, չար լեզուներն ասում էին թէ նա այդ անում է իր փառքի համար և Ներս. դպրոցից դուրս գալով, ուր 10—13 տարի ան-խափան ուսուցիչ էր, կամենում է փող ժողո-վի, լրագրում հրատարակի, անուն ստանայ, որ բալքի ճեմարան ուսուցիչ գնայ...

Չէ, ասե՛ք, լաւ է քիչ-քիչ տանք, միշտ տանք մեր յօժարութեամբ, քան թէ 100 տանք ու...

Ի հարկէ այս ամենը անարդար և սխալ տե-սութիւն է ասողների կողմից։ Պարոն ազգասէրի նպատակը գովելի էր, օրին և հասաւ, միայն անուրանալի է և այն որ դպրոցի յարաւուրժ թեան համար եթէ նրա պահպանողներն բոլո-նազատենք և կապաճենք իսկ ձգելով դպրոցի կենդանութեան միակ յոյսն էլ, նրա մշտական արդիւնքը՝ օրական չինենք,—այդ կը լինէր կար-ծեմ և խելօք ու թիւն և յիմարութիւն... կամ մի խօսքով հեւ լօք յիմարութիւն...

—Չէ. պ. ընթերցող։

Գրիգոր Պապեանց

ճեմարանում, Արուստագիտական ուսումնարա-նում, Առնական ուսումնարանում, Հաղորդակ-ցութեան ճանապարհների դպրոցում։ Մեծագոյն մասը Թիֆլիսէն են, թէ և Ալեքսանդրապոլէն ևս սակաւ չեն. և բաւական լաւ պարագած են իրանց գործով։ Արձակուրդի ժամանակ լինելով, ես ոչ քիչ տեսնել չը կարողացայ թէ և շատ ցան-կանում էի. որը իրանց հայրենիք գնացել են և որը չըլակայ դատաւարներում ցրվել են, որն էլ գործնական պարագանց պատճառա-նով գիտէ որտեղ են։

Քանի օր է, որ մայրաքաղաքի օդը պարզվել է. բնակիչները օրախոսութիւնը չափ չունի. ա-մենքը շտապում են իրանց փակված բնակարան-ներից դուրս գալու և պարզ օդի մէջ քանի մի ժամ չնչելու։ Տէր Աստուած, Տէր Աստուած, ա-սում եմ շատ անգամ մտքի մէջ. մենք, որ գրեթէ տարին տասներկու ամիս վայելում ենք այդ Աստուծու ողորմութիւնը և ոչ մի անգամ մտքեւս չենք բերում, որ մաքուր, առողջաբար օդը Նորա անթիւ, անհամար շնորհներէն մինն է, իսկ եթէ մայրաքաղաքացիին հարցնես, նորա շնորհներէն ամենահարկաւորն է՝ հաւասար օրական հա-ցին... մենք, ապերախներս, շատ անգամ մո-ռանում ենք եւ, որ աշխարհիս օդ ասած նիւթդ կայ։ Տգիտութիւնը մեզ ցայն աստիճան տա-րածված է, որ մեր բազմութիւնը օդի վրա ոչինչ գաղափար չունի, եւ հաւատալի գիտեմ, որ օդը և դատարկութիւնը համաշխարհ խօսքեր են։ Խոչն եմ ասում, ժողովրդական լեզուի մէջ օդ խօսքը չը կայ անգամ. նեֆէս, հալա, ВОЗДУХ չոկ չոկ խօսքեր են և չոկ չոկ իմաստ են յայտնում և ոչ միւրն այն անօր հեղուկը հասկանում է, որ բաղկացած է թթուածինէ, ազօթէ և մասամբ ջրածինէ։—Պէտք է օրին մերոնց դատարա-կութիւն, պէտք է արեօք Մանկական Պարտէզ...

Ռ. Պատկանանց

ՀԱՐԱԿԱՒՐԻ Է մի տուն, որի մէջ տեղաւորվի
Թիֆլիսի գլխաւոր պօլիդիմէյստեր, նաև կանցե-
լաւարան և հրաշէջ գունդը իր սպլլերով: Տունը
պէտք է լինի քաղաքի կենտրոնում, պէտք է
ունենայ ախոռ 36 ձիաների համար, նոյնպէս
մեծ բակ և չարմաւոր տնտեսք:

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

1-3

ՄԵՏԱԳՐԱՆԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՅԱՋԻՆ
 ԹՈՎՄԱՍ ԽԱՆԴԱՄԻՐՈՎԻ (նա խզիւն խԱՆԱ-
 ԹՈՎԻ) տեղագրութիւն է Վելլամիոնսկայայ փո-
 ղոցի վրա գտնվող խոսրոն վիտանից Նրեմանս
 չորապարմի վրա խԱՐՁՈՎԻ տանը, Թիֆլիսի
 հրապարակէ կը գրտի ընկերութեան շինութեան
 տակ, Յայտնելով որա մասին Թիֆլիսի հասո-
 րակութեան, միմայայն եմ որ նա իր այցելու-
 թիւնները չի պակասեցնի իմ մազապիւնից, հաւա-
 ճանքն լինելով, որ ինձանից դուրս եկած ապ-
 րտաքերը լաւ յատկութիւններ ունեն և գնեքը
 չատ չարաբոր են:

3-6

МАГАЗИНЪ шелковыхъ товаровъ
ТОМАСА ХАНДАМИРОВА (бывшій
ХАЛАТОВА) перемѣщенъ съ Вельями-
новской улицы дома Хосроева на Эри-
ванскую площадь въ домъ ХАРАЗОВА,
подъ Тифлисскимъ обществомъ взаимна-
го кредита. Объявляя о семъ Тифлис-
ской публикѣ, льшу себя надеждою, что
она не оставитъ своимъ посѣщеніемъ мой
магазинъ съ тою увѣренностью, что от-
пускаемые мною товары будутъ доброка-
чественные и цѣны самыя умѣренныя.

3-6

ԿՈՂԿԱՍԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ԲՕՏԱՆ (учебная рота) հրախուսվ է ցանկացողներին կապալով վերցնել բուսայի մէջ ծառայողներին համար հարկատու եղած ՄՍՄ ԵՒ ՄԻԻՄ ՄԹԵՐՎՈՐՆԵՐԻ ՀԱՍՑՆԵԼԸ: Ցանկացողները հրախուսվում են աճուրդին ներկայ լինելու համար բուսայի ջորատուները, իսկներները ուսումնարանի մօտ, սեպտեմբերի 25-ին առաւօտեան 10 ժամին:

Լճյա տեսաւ
«ՆԱԽԱՐԱՆԵՐՄՈՒՆԻ»

Անունով մեր աշխատասիրութեան I հատորը, որ պարունակում է իւր մէջ մեծ քանակեանքի տունված 600-ից աւելը նախապաշարունմեր:—Գինն է 50 Կ:

«Въ Тифлисъ.—Кавказская книжная тор-
говля З. П. Грикурова.»

3. Նազարեանց

Գուրու եկաւ մամուլի տակից և վաճառվում է
«Կովկաս, գրաված, Զաք, Կրիգորեանցի»

1. Պօլուխմպեթրիալ — կատակերգութիւն, երկու
արարումածով (մանկական թատրոն թարգմ. Զ.
Լազարեանց, տպագրութիւն 9. Գրիգորեան.

Վրահն է 20 կօպէկ:

2. Նախապաշարմունք — 1 հատոր, աշխատասիրութիւն 3. Նպարեանց:

Գինն է 50 Կոպէկ

Շուտով դուրս կը գայ մամուլի տակից:

1. Դռնկաներից—ընթերցարան, երբ, տպագր. Կ/նն է 40 կոպեկ:

Մամուլին տակից գուրս եկաւ և ծախվում է Ս. Մանգլինեանի հետեւեալ աշխատութիւնները.

1) Ն ա հ ա պ ե տ ա կ ա ն և հ ա յ ր ե ն ի
ա շ խ ա ր հ, երրորդ տարվայ ուսմունք և
ընթերցմունք, զինն է 65 կ.:

2) Համառոտ մանկավարժական թիւն. գինն է 1 ր. 50 կ.

5-6

Ներսիսեան, Հայոց Ազգային-Հոգեւոր զպրոցի
հոգաբարձութիւնը հրահրում է ցանկացողներին
յայնձն առնել տալ զպրոցի որդեգիրներին կո-
չիկներն Այս մասին նշանակած է աճուրդ ու
ռանջ կրկնածրդի) հոգաբարձական խորհրդա-
խումտ սեպտ. ամսին 27-ին, երկիոյեան Տ
ժամկէն Պայմանները մասին կարելի է տեսնել
նալ զպրոցի զինանատան մէջ ամսն օր, բացի
կիրակիէն եւ տօներէր, ցերեկվայ 10-ից մինչ
12 ժամն:

ԹԻՖԼԻՍԻՆ՝ ԲԱՍՄԱԲԱՅԵՆ՝ ՎԱՐՈՈՒԹԻՒՆԵՆ
յայտնուժէ, որ հոկտեմբերի 18-ին ներկայ տար-
վայ իր ներկայութեամբ կը լինի ածուրդ առանց
կրկնաձուրդի: Ընացականեան կամուրջի մօտ
Քուռ գետի վրա գտնվող երկու պարունելի
պահելը կապալով տալու համար երեք տարի ծա-
մանակով:

1-2

ՔԱՐԱՇՈՒԽ „ՌՈՒՍԱՆԱՆ“ ՀԱՄՏԻՑ

(ՀԱՆՔԻՑ), ՈՐ ԳՑՆՎՈՒՄ Է ԶԷԼՈՒԹԱՆԻ ԱՐՈՒԱՐՁԱՆԻ ԿՈՒՐՄԵՔԱԳԻԻՂՈՒՄ

ԸՆԿ. ՆԵՅՄԸՆ—ՇԼԵՍԻՆԳ

Փախույթ է Շէնիւնգի ՊԱՎԻԼԻՅՆՈՒՄ ՄԵՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՄԻԱՍԻՆ ԱՄԲՈՂԶ ՎԱԳՅՆԵՐՈՎ ԼՐԱԹՈՒՂՈՒ ԿԱՅԱՐԱՆՅՑ ՊՈՒԴԸ 25 ԿՕՊ., ԻՍԿ ՓՈՔՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ ՔԱՂԱՔԻ ՄԷՋ ԳՏՆՎՈՂ ՊԱՀԵՍՏՅՑ ՊՈՒԴԸ 28 ԿՕՊԷԿՈՎ:

1. Ն. Տէր-Ղևոնդեանի Մայրենի լեզուի առաջին տարին զեցերորդ տպագրու-
թեամբ, բազմաթիւ պատկերներով զարդարված և նորանոր առաջուածներով, առաձներով,
հանրութիւններով և յօղւածներով լրացուած: Դիմն է 35 կոպէկ: Գումարով առնողներին
զեջումն կը լինի:

2. Մայրենի լեզուի երկրորդ տարին չորրորդ տպագրութիւն, նոյնպէս նորանոր պատկերներով զարդարած և մասնաւոր փոփոխութիւններով լրացրած: Գինն է 40 կօպ.: Գումարով առնողներին զեջումն կը լինի:

Ծանոթում թիւն. Վերոյիշեալ գրքերը ընդունված են Թիֆլիսի Թեմի պ. Թեմ. վերատեսչեց իբրեւ սկզբնական դասագիրք Հայոց լեզուի՝ իր ձեռքի տակ եղած բոլոր ուսումնարաններում: Սգբա ընդունված են նոյնպէս Կովկասի Հայոց ուսումնարաններից գրիթէ ամենում, նմանապէս և Ռուս Թիմերի ուսումնարաններից շատերում: Վաճառվում են բացառապէս Վենտրօնական գրափաճառնոցում: Մայրենի լեզուի չ. և դ. տարին պատրաստ կը լինի մինչև սեպտեմբերի 10-ը:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎ ԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

(ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԷՈՒՄ)

Վաճառվում են հետևեալ հայերէն գրքերը՝

4.

- | | | | |
|-----|---|-----------------------|------|
| 1. | Ն. Տէր-Ղևոնդեան Մայրենի լեզու. | ա. տարի վեցերորդ տիպ. | — 35 |
| 2. | » | բ. տարի չորրորդ տիպ. | — 40 |
| 3. | » | գ. և դ. ա. երկր. տիպ. | — 70 |
| 4. | Ղ. Աղայեանց՝ Ուսումն. Մայրենի լեզուի, երրորդ տիպ. | — 15 | |
| 5. | Տէր-Ստեփանեանի՝ Սկզբունք. քրիստոնէական հաւատոյ. | — 50 | |
| 6. | Գ. արքեպ. Այվազեան՝ Նախակրթանք զրաբար լեզուի մ. ա. | հինգերորդ տիպ. | — 40 |
| 7. | Տէր-Դուրեանց՝ Русское Слово | — 35 | |
| 8. | Արովմանց՝ Հայոց պատմութիւն երկրորդ տիպ. | — 60 | |
| 9. | Հատրնտր ընթերցուածք ի մատենադրաց նախնեաց՝ հանգերձ
Ժանօթութեամբք Վիեննա Թոռնեան | — 4 | |
| 10. | Թորոս Լեւոնի պատմական վէպ ազգ. կենսեփոյ | — 4 | |
- Այս օրերս կը ստանանք Վենետիկց Առձեռն բառարանների, Հայաստանի քարտեզներ և ընտիր մատենագիրների աշխատութիւններից շատերը:

[illegible]